

2.5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների վերաբերյալ վարչական վիճակագրություն իրականացնող մարմնից (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն) համապատասխան բյուջեների եկամուտների և ծախսերի վերաբերյալ վիճակագրական տվյալների (հաշվարկված Արժույթի միջազգային հիմնադրամի «Կառավարության ֆինանսների վիճակագրություն-1986» ձեռնարկի, իսկ՝ 2008 թվականից՝ «Կառավարության ֆինանսների վիճակագրություն-2001» (GFS-2001) ձեռնարկի մեթոդաբանությամբ սահմանված սկզբունքների ու հասկացությունների հիման վրա, ընդ որում վերջինիս ամբողջական ներդրման աշխատանքները դեռ շարունակվում են) ստացման, ամփոփման և հրապարակման աշխատանքները: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եռամսյակային պարբերականությամբ ստացվել, մշակվել, ամփոփվել և հրապարակվել են նաև Հայաստանի Հանրապետության պետական պարտքի (ներքին և արտաքին) վերաբերյալ վիճակագրական ցուցանիշներն՝ ըստ վարկատուների և վարկառուների:

Ֆինանսական միջնորդության հատվածի վիճակագրության առումով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից (որպես համապատասխան բնագավառի վարչական վիճակագրություն իրականացնող մարմնի), պարբերաբար ստացվել, ամփոփվել և հրապարակվել են դրամավարկային և բանկային համակարգի, ֆինանսական շուկայում ձևավորված արտարժույթների ամենօրյա և ամսական միջին փոխարժեքների, ֆինանսական միջնորդության ոչ բանկային կազմակերպությունների ենթահատվածի հիմնական ցուցանիշների վերաբերյալ վիճակագրական տեղեկությունները: Նույն ժամանակահատվածում, Ծառայության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկատվության փոխանակման համաձայնագրի համաձայն՝ սահմանված պարբերականությամբ վերջինիս է տրամադրվել կազմակերպությունների ֆինանսների մասին վիճակագրական ամփոփ տեղեկատվությունը:

Կազմակերպությունների ֆինանսների վիճակագրության բնագավառում՝ վերանայվել են գործող պետական վիճակագրական հաշվետվական ձևերը, դրանք համապատասխանեցնելով Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին և միջազգայնորեն ընդունված և կիրառվող մեթոդաբանություններին: Մասնավորապես՝ ազգային հաշիվների համակարգի եռամսյակային ցուցանիշներ ստանալու համար կազմակերպությունների տնտեսական գործունեությունը բնութագրող վիճակագրական դիտարկման փաստաթղթերում աճողական ցուցանիշներից անցում է կատարվել դիսկրետ ժամանակահատվածի ցուցանիշների:

«Ֆինանսական հաշիվ» վիճակագրության ներդրման շրջանակում՝ պետական վիճակագրական հաշվետվական ձևերով հավաքագրված, վարչական ռեգիստրներից ստացված, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ հետազոտության տվյալների հիման վրա կատարվել են հաշվարկներ «Եվրոպական հաշիվների համակարգ-95»-ի սկզբունքներին

համապատասխան «ֆինանսական հաշվի» կազմման ուղղությամբ: Այդ նպատակով «ֆինանսների վիճակագրության բարելավում» աշխատանքի շրջանակում 2009 թվականին իրականացվել է ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ հետազոտությունը: Հետազոտություն իրականացվել է «Կազմակերպությունների ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ» Ձև թիվ 3-ՖՀ հետազոտության հարցաթերթի միջոցով:

Արդիականացվել է պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների մուտքագրման, մշակման, ստացված արդյունքների տարածման և ամփոփ ելքային աղյուսակների ստացման ծրագիրը:

Պետական ֆինանսների, կազմակերպությունների ֆինանսների, դրամավարկային միջնորդության համակարգի ցուցանիշների, արտարժույթային փոխարժեքների դինամիկայի, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի գործունեությունը բնութագրող տվյալների հիման վրա յուրաքանչյուր տարի հրատարակվել է «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն» վիճակագրական ժողովածուն՝ ցուցանիշների դինամիկ շարքերով: